Summaries
Ամփոփումներ

Վերածնող անոթներ. Խաչքարի ապակառուցակցումը ուշմիջնադարյան գերեզմանաքարերի պատկերաշարում

Լևոն Աբրահամյան, Արա Դեմիրխանյան†

Ուսումնասիրվում է հայկական դասական խաչքարի սիմվոլիկ ապակառուցակցումը (դեկոնստրուկցիան) ուշմիջնադարյան գերեզմանաքարերի պատկերաշարում՝ կենտրոնանալով գեներատիվ մոտիվների (հատկապես՝ անոթների) տեղաշարժի վրա դեպի նոր պատումային համատեքստ: Հենվելով Արա Դեմիրխանյանի եռամաս հայելային-սիմետրիկ կառուցվածքային սխեմայի վրա՝ հեղինակները դիտարկում են, թե ինչպես է խաչքարի՝ ծնունդ ապահովող ներքին կառուցվածքային տրամաբանությունը շարունակվում 15-16-րդ դարերի գերեզմանաքարերի պատկերագրություններում: Այս հորինվածքներում ներառված անհամաչափ մեծ կուժերը, որոնց վրա հաճախ առկա են վարդյակներ, հայտնվում են ոչ միայն «հավերժ խնջույքի» տեսարաններում, այլև անսպասելի համատեքստերում: Այստեղ դրանք փոխարինում կամ արձագանքում են խաչքարի հորինվածքի գեներատիվ սկզբունքը: Հոդվածը փաստում է, որ այս անոթները դեկորատիվ տարրեր չեն, այլ վերածննդի ծածկագրված նշաններ են, որոնք սկիզբ են տալիս՝ «ծնում են» խաչքարի ուղղահայաց խաչը: Արդյունքում՝ գերեզմանաքարերը դառնում են ապակառուցակցված խաչքարեր, որտեղ վերածնման սիմվոլիկան բաշխվում է տարբեր կոմպոզիցիոն դաշտերում: Այս շարունակականությունը վկայում է տիեզերաբանական և հուղարկավորության իմաստների խորքային կապի մասին: Այս համատեքստում խաչքարին առնչվող անոթը դառնում է մահից դեպի հոգևոր վերածնունդ անցման միջնորդ ուշմիջնադարյան հայկական պատկերագրական մշակույթում:

Դվինի 9-րդ դարի հասարակ խեցեղենը՝ ըստ 2023 թ. հնագիտական աշխատանքների

Համազասպ Աբրահամյան

Զարգացած միջնադարի խեցեգործության առաջին շրջան է համարվում 9-րդ դարը, որը անցման օղակ է հանդիսանում նոր և նախորդ ժամանակաշրջանների միջև: 8-րդ դարի վերջից սկսած խեցեղենի արտադրությունը ստանում է մասսայական բնույթ, և նկատվում է կավե անոթների որոշակի ստանդարտացում: Ձևավորվում են անոթների պատրաստման և հարդարման նոր տեխնոլոգիաներ, ձևաբանական կերտվածքներ:

Դվին հնավայրում 2022 թվականին հետախուզական, իսկ 2023 թվականին ընդլայնված հնագիտական պեղումներ իրականացվեցին ապագա թանգարանի և հնագիտական հանգրվանի շենքի տարածքում (արշավախմբի ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Համլետ Պետրոսյան): Սույն հոդվածի նպատակն է փորձել քննության ենթարկել պեղավայրից հայտնաբերված հասարակ խեցեղենի հավաքածուն Դվինի 9-րդ դարի հասարակ խեցեղենի համատեքստում: Այս առումով ուսումնասիրել և առանձնացրել ենք Դվինի՝ հիմնականում Կենտրոնական թաղամասի 9-րդ դարի հնագիտական շերտերից հայտնաբերված հասարակ խեցեղենի օրինակները առկա գրականությունից և Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդից:

Դվինի և ոչ մի պեղավայրում, մինչև թանգարանի տարածքի պեղումները, 9-րդ դարի շերտն այնպես չի սահմանազատվում, ինչպես Կենտրոնական թաղամասում: Արաբական տիրապետության վերջին շրջանում (8-րդ դարի վերջ – 9-րդ դարի սկիզբ) այս հատվածը կառուցապատվել է հիմնականում հում աղյուսից բնակելի-տնտեսական, արտադրական համալիրներով, որոնք ոչնչացել են 894 թվականի երկրաշարժի ժամանակ:

Ի տարբերություն Կենտրոնական թաղամասի 9-րդ դարով թվագրվող հնագիական շերտերի՝ Թանգարանի տարածքի պեղավայրում 9-րդ դարի հնագիտական շերտերը վնասված չեն ավելի ուշ շրջանների կառուցապատումներով և գերեզմաններով: Հնագիտական շերտի թվագրության համար հիմք են հանդիսանում 9-րդ դարով թվագրվող ջնարակապատ խեցեղենի առկայությունն ու 894 թվականի երկրաշարժին վերաբերող ավերածության շերտերը: 9-րդ դարով թվագրվող անխաթար շերտի առկայությունը հնարավորություն է տալիս քննության ենթարկել տեղում հայտնաբերված և հստակ թվագրվող մեծ քանակությամբ հասարակ խեցեղենը:

Հայտնաբերված օրինակներն ու հնագիտական իրավիճակները ոչ միայն իրենց զուգահեռներն ունեն Կենտրոնական թաղամասի շերտերում, այլև նոր տվյալներ են բերում նշված հատվածի՝ համեմատաբար խառնված կամ անցումային շերտերից հայտնաբերված առարկաների թվագրությունը հստակեցնելու համար:

Արուճի տաճարական համալիրը. հնագիտական նոր պատկերացումներ շերտագրության և պատմական զարգացման վերաբերյալ

Աստղիկ Բաբաջանյան, Սերջիո Ֆերդինանդի, Քիարա Մասկարելո, Ելենա Ֆաուստի, Ֆրանչեսկա Գալանտի

2022 թվականին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և ԻՍՄԵՕ-ի՝ Միջերկրածովյան և արևելյան երկրների ուսումնասիրության միջազգային ասոցիացիայի միջև համագործակցության՝ «Միջնադարյան ամրաշինությունը Մետաքսի ճանապարհին» հայ-իտալական համատեղ ծրագրի շրջանակում, Արուճ գյուղի մի շարք հնավայրերում իրականացվել են հնագիտական պեղումներ և հետազոտություններ: Դրանք ներառում էին Արուճի տաճարական և պալատական համալիրը (Տեղամաս 1), վաղմիջնադարյան ամրոց-զորակայանը (Տեղամաս 2) և զարգացած միջնադարյան դղյակը (Տեղամաս 3): Ստուգողական պեղումների առաջնային նպատակը Արուճի ամրաշինական և աշխարհիկ ճարտարապետական համալիրների համապարփակ ուսումնասիրությունն է՝ ճշգրտելու դրանց ժամանակագրական կապերը, շերտագրությունը, ինչպես նաև վերակազմելու Արուճի հնագիտական համալիրների պատմական զարգացման և օգտագործման փուլերը:

Հոդվածը ներկայացնում է Տեղամաս 1-ում իրականացված պեղումների արդյունքները: Դեռևս 20-րդ դարի սկզբից այս համալիրը և, մասնավորապես, Կաթողիկե տաճարը իր ճարտարապետական և պատմական նշանակությամբ մշտապես եղել է բազմաթիվ ականավոր գիտնականների ուշադրության կենտրոնում: 1950-ականների սկզբին Հնությունների պահպանության կոմիտեի կողմից իրականացված լայնածավալ պեղումները բացահայտեցին նաև Գրիգոր Մամիկոնյանի պալատական համալիրի կարևոր կառույցները՝ 7-րդ դարի սյունազարդ դահլիճը, աշխարհիկ կառույցի վերածված 5-րդ դարի եռանավ բազիլիկ եկեղեցին, ինչպես նաև մի շարք այլ կառույցներ ու հուշակոթողներ: Այնուամենայնիվ, այդ ուսումնասիրություններն առաջնահերթություն են տվել 7-րդ դարի մոնումենտալ ճարտարապետությանը և անտեսել համալիրի շերտագրական հաջորդականությունը և օգտագործման հետագա փուլերը: Նոր պեղումները նպատակ ունեին լուծել այդ բացը՝ ավելի խորը պատկերացում տալով համալիրի հետագա բնակեցման և վերափոխման փուլերի մասին:

7-րդ դարի սյունազարդ դահլիճի արևելյան պատին կից տեղադրված ստուգողական հետախուզահորի պեղումներով բացվել է 12-13-րդ դարերին

բնորոշ շարքային բնակարանի մի հատված: Հայտնաբերված օջախը, երկանքի աղացաքարի հատվածները, քարե կոկիչները, խոհանոցային և պահեստավորման անոթները, սեղանի սպասքի նմուշները, կենդանական ոսկորները վկայում են խոհանոցային և օժանդակ գործունեության նպատակային կազմակերպման և գործառույթային բաժանման մասին: Պատերի շարվածքում երկրորդական օգտագործման քարերի առկայությունն ընդգծում է ինչպես բնակեցման շարունակականությունը, այնպես էլ՝ ավելի վաղ կառույցների հարմարեցումը նոր գործառույթներին: Անիի Ամենափրկիչ եկեղեցու արձանագրություններից մեկում Արուճի եկեղեցու դիմաց գտնվող տան նվիրատվությունը և պեղումներով բացված բնակելի հատվածի առկայությունը փաստում են, որ զարգացած միջնադարում տաճարական և պալատական համալիրի տարածքում խիտ բնակեցում է եղել: Գրավոր աղբյուրները և հնագիտական տվյալները ընդգծում են Արուճի ոչ միայն կրոնական և վարչական, այլև արհեստագործական և առևտրային գործունեության մասին: Արուճի բարգավաճումը զարգացած միջնադարում էապես կապված էր Մետաքսի ճանապարհի երկայնքով նրա ռազմավարական դիրքի հետ, որը ամրոցի և քարավանատան կառուցմամբ ընդգրկվում էր Զաքարյան Հայաստանի ավելի լայն ենթակառուցվածքային համակարգում:

Առաջին քրիստոնեական տաճարների ճարտարապետական հատակագծումը Իբերիայի թագավորությունում (հնագիտական նոր հայտնաբերումների լույսի ներքո)

Նոդար Բախտաձե

Մինչ օրս վրաց պատմաբանների մեծամասնությունը լուրջ առարկություն չի հայտնել 1920-ական թվականներին արվեստաբանների կողմից շրջանառության մեջ դրված բավական տարօրինակ մի ենթադրության շուրջ: Համաձայն դրա՝ Վիրքի իշխանությունները քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն հաջորդող դարում կառուցել են բացառապես փոքր չափի եկեղեցիներ՝ առանց որևէ կանոնավոր նախագծման, ինչը կտրուկ տարբերվում է մյուս բոլոր վաղ քրիստոնեական ձևերից: Հաշվի առնելով հռոմեական և վաղ բյուզանդական աշխարհում եկեղեցական ճարտարապետության կայուն միտումները՝ պարզ է դառնում, որ վրաց ճարտարապետության հետազոտությամբ զբաղվող նախընթաց պատմաբանները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեին տեղական

գրավոր աղբյուրներին՝ «Քարթլիս Ցխովրեբա»-յին («Վրաստանի պատմություն») և «Մոքցևայ Քարթլիսայ»-ին («Վրաց դարձը»), որտեղ նշվում է Քարթլիի թագավորությունում առաջին եկեղեցիների կառուցման մասին՝ քրիստոնեության ընդունումից անմիջապես հետո: Բանն այն է, որ այս աղբյուրները շեշտում են, որ եկեղեցաշինությունը ընթացել է բյուզանդացի ճարտարապետների անմիջական մասնակցությամբ, ովքեր Վրաստան էին ժամանել առաջին հոգևորականների հետ միասին:

Այժմ դժվար է բացատրել, թե ինչ պատճառով են վրաց արվեստաբաններն անհիմն ենթադրել, որ Վիրքում կառուցվել են բազիլիկ եկեղեցիներ, որոնք քիչ են տարբերվում հռոմեական ու վաղ բյուզանդական եկեղեցիներից: Այնուամենայնիվ, այդ ուսումնասիրողները Նեկրեսիի վանքում և Չերեմիի հին քաղաքում կառուցված մատուռները համարել են 4-րդ դարում ստեղծված ամենակարևոր քրիստոնեական եկեղեցիներ:

Սակայն, հենվելով մինչ օրս իրականացված հնագիտական հետազոտությունների արդյունքների վրա, կարծում ենք, որ այս վարկածները մերժելի են: Կախեթիի մարզի Քվարելիի շրջանի տարածքում գտնվող նախկին Նեկրեսի քաղաքում հայտնաբերվել են երկու մեծ բազիլիկներ, որոնք կառուցվել են 4-րդ դարի վերջին կամ 5-րդ դարի սկզբին:

Առաջին բազիլիկ եկեղեցին հայտնաբերվել է Նեկրեսի քաղաքի նախկին թաղամասում՝ Չաբուկաուրիում: Այն ունի 31 մ երկարություն և 15 մ լայնություն: Դահլիճը բաժանվում է երեք նավերի՝ հենված հինգ զույգ ուղղանկյուն սյուների վրա: Կենտրոնական նավի արևելքում է գտնվում ուղղանկյուն խորանը: Խորանի աջ և ձախ կողմերում կողմնային նավերը ավարտվում են ուղղանկյուն պաստոֆորիաներով (ավանդատներով):

Պեղումները ցույց են տվել, որ եկեղեցին ծածկված է եղել հարթ և ալիքավոր կղմինդրով, որոնք հենվել են փայտե գերանների վրա: Չաբուկաուրիի բազիլիկում հայտնաբերված ուղղանկյունաձև խորանի տանիքի լուծումները ուղիղ զուգահեռներ չունեն վրաց կամ վաղ միջնադարյան մյուս կոթողների հետ, սակայն, պլանային նման կառուցվածքները բնորոշ են Հյուսիսային Ասորիքի և Սուրբ երկրի եկեղեցիներին (4–6-րդ դարեր), ինչպես նաև հազվադեպ հանդիպում են Միջագետքում և Եգիպտոսում:

Դուրուջու գետի աջ ափին՝ Դոլոչոպիի անտառապատ տարածքում (Քվարելիի գյուղական համայնք), հայտնաբերվել է էլ ավելի մեծ բազիլիկ: Այն ունի երեք նավ՝ բաժանված հինգ զույգ խաչաձև սյուների միջոցով: Միջին նավի արևելյան եզրին գտնվում է հստակ պայտաձև, աբսիդով խորան: Հատակին հայտնաբերված փլուզված քարերի դասավորությունը հուշում է, որ աբսիդը վերևից ծածկված է եղել կրաքարե կամարով: Խորանի շուրջ կառուցված է եղել քառաստիճան նստարան՝ հոգևորականների համար, իսկ խորանի արևելյան եզրին՝ բարձրացված աստիճաններով, կառուցվել է արքեպիսկոպոսի գահը (սինթրոնոն), ինչը կիրառական էր վաղ բյուզանդական տաճարներում: Հոգևորականները պատարագի ժամանակ նստում էին այդ նստարաններին՝ մարմնավորելով Քրիստոսին և նրա առաքյալներին:

Խորանի տակ հայտնաբերվել է շուրջ 15 մ² մակերեսով գետնափոր դամբարան, որը կառուցվել է եկեղեցու շինարարության ժամանակ: Տարածքի կենտրոնում հատակին եղել է փայտե գերաններից պատրաստված մասունքարան՝ սուրբ մասունքների պահպանման համար:

Դոլոչոպիի բազիլիկի արտաքին պարագիծը՝ նախասրահը և սրահները ներառյալ, կազմում է 44 մ × 27 մ, ինչը զուգահեռը չունի ոչ միայն Կովկասում, այլև՝ հարակից շրջաններում: Իր ճարտարապետական, տարածական և գեղարվեստական լուծումներով այս տաճարը նմանը չունի հռոմեական և բյուզանդական վաղ քրիստոնեական բազիլիկների համեմատությամբ:

Բացի այդ, Չաբուկաուրիի և Դոլոչոպիի բազիլիկների ստորին շերտերում պեղումների արդյունքում հայտնաբերվել են տարբեր գտածոներ՝ հիմնականում 4-5-րդ դարերով թվագրվող կավե անոթների բեկորներ: Ուշագրավ են նաև Չաբուկաուրիի բազիլիկում հայտնաբերված այսպես կոչված ասորիքյան տիպի բրոնզե ճրագները՝ բնորոշ 4-րդ դարին: Դոլոչոպիի բազիլիկում հայտնաբերվել են արծաթե և ապակե լուսատու սարքեր՝ վաղ բյուզանդական «բազմամոմ» ջահերի տեսակներ (polycandelabra), որոնք թվագրվում են 5-6-րդ դարերով:

Վերջապես, 2016-2017 թթ. Դոլոչոպիի բազիլիկի շինարարական շերտից հայտնաբերված օրգանական մնացորդների ռադիոածխածնային անալիզը ցույց տվեց, որ 95% հավանականությամբ եկեղեցու շինարարությունը սկսվել է 387-401 թթ.:

Այսպիսով, մեր միջգիտակարգային հետազոտությունը ժխտեց մինչ այժմ ընդունված տեսակետը, փոխարենը հաստատելով, որ Վրաց դարձից անմիջապես հետո՝ 4–5-րդ դարերում, կառուցվել են խոշոր բազիլիկներ՝ հռոմեական և վաղ բյուզանդական ծիսական պահանջներին համապատասխան:

Ազգային ինքնության դրսևորումները Սիմեոն Պլնձեհանեցու մատենագրական երկերում

Ազատ Ա. Բոզոյան

Միջնադարագետի համար Այսրկովկասի մշակութային աշխարհը ներկայացնում է ազգային ինքնության բազմակողմանի և քիչ ուսումնասիրված բնագավառ: Իմ հրատարակության նյութը հայազգի թարգմանիչ Սիմեոն Պլնձահանեցու գրական գործունեության հետ կապված հիշատակարաններն են: 13-րդ դարում նա վրացերենից հայերեն է թարգմանել Պրոկղ Դիադոխոսի, Հովհաննես Սինայեցու և այլոց աշխատությունները: Այս թարգմանությունների հիշատակարանները պարունակում են հայտնի թարգմանչի գործունեության

մի քանի դրվագների բացառիկ գրառումներ: Պահպանված գրառումների համաձայն՝ վրաց եկեղեցու վանական Սիմեոնը աշխատել է Հայոց ախարհի Գուգարք նահանգի վրացական վանքում կամ, ինչպես ինքն է նշում, Լոռե քաղաքի մոտ (ըստ վրացական միջնադարյան աղբյուրների՝ Սոմխիթիի շրջանում): Սիմեոնի գործունեության տարածքը 13-րդ դարում գտնվում էր Վրաց թագավորության սահմաններում: Պղնձահանքի վանքը վրաց եկեղեցու վերահսկողության տակ է անցել 13-րդ դարում՝ Իվանե Զաքարյան իշխանի միջամտությամբ: Սիմեոնը դավանանքով քաղկեդոնական էր, ուստի աշխատել է «վրացիների» եկեղեցում: Սակայն, իր հիշատակարաններում նա շեշտել է. «*Այդ նպատակով ես թարգմանել եմ այս* [աշխատանքը], *որպեսզի* [իմ ժողովրդի գրականությունը] *բացթողումներ չունենա*»:

«Մեծ իշխան» Զեսար Օրբելյանը և Զեսարի պալատը որպես պատմամշակութային ժառանգության բացառիկ հուշարձան

Ավետիս Գրիգորյան, Լևոն Վասիլյան, Հայկ Դանիելյան, Արման Եղիազարյան, Աննա Բաղդասարյան, Աստղիկ Սիմոնյան, Տիգրան Զաքյան, Աստղիկ Արզումանյան, Սուսաննա Բաբայան, Հասմիկ Սիմոնյան

ՀՀ Վայոց ձորի մարզի Հորս գյուղը եղել է միջնադարյան Հայաստանի նշանավոր իշխանական տոհմերից մեկի՝ Օրբելյանների նստոցը: Այստեղ են գտնվում 13-14-րդ դարերի Հայաստանի քաղաքացիական ճարտարապետության պահպանված լավագույն նմուշներից մեկը համարվող պալատական համալիրի ավերակները, պալատին կից միանավ խոնարհված եկեղեցին, իշխանաց իշխան Լիպարիտի որդի Զեսար Օրբելյանին և նրա կնոջը՝ Խորիշահ իշխանուհուն հիշատակող արձանագրություններ: 2024 թ. ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի արշավախումբը պեղումներ կատարեց Հորսում, որի արդյունքում պատրաստվեց միջնադարյան պալատական համալիրի կենտրոնական կառույցի և հարակից եկեղեցու վերականգնման նախագիծը:

Պեղումներով պարզվեց, որ պալատի կենտրոնական կառույցը շրջապատված է եղել բնակելի և տնտեսական նշանակության հաղորդակից կցակառույցներով: Միանավ եկեղեցու շինաքարերից մեկին հայտնաբերված թվականը հիմնավորում է վերջինիս կապը Զեսար Օրբելյանի իշխանության ժամանակաշրջանի և նրան վերագրվող մոտակա պալատի հետ, իսկ

պալատում և եկեղեցում հայտնաբերված սյունախարիսխները փաստում են դեռևս անհայտ մոնումենտալ այլ կառույցների երբեմնի գոյությունը մոտակայքում:

Գրավոր և վիմագիր սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ հիմնականում ամբողջանում է իշխան Զեսար Օրբելյանի կյանքի և գործունեության ժամանակաշրջանը, իսկ պեղումներով հայտնաբերված հիմնականում 13-14-րդ դարերով թվագրվող խեցեբեկորները լրացնում են միջնադարյան իշխանական պալատում և դրա շուրջ ապրած մարդկանց կենցաղի պատկերը: Եկեղեցու վերին շերտում հայտնաբերված մանկական թաղումներն ուշագրավ են, կարիք ունեն հետագա պատմահամեմատական և լաբորատոր ուսումնասիրությունների՝ պարզելու մանկահասակ երեխաների մահերի հանգամանքները, պատճառները, կապը միմյանց հետ և թաղումների ժամանակը:

Շուշիի Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցին

Նժդեհ Երանյան

Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում է Շուշի քաղաքի Վերին թաղում: Այն կառուցել են մեղրեցի գաղթյալները համանուն թաղամասում՝ 1838 թ-ին: Խորհրդային տարիներին եկեղեցին քանդվել, հարմարեցվել և օգտագործվել է որպես ամառային բացօթյա կինոթատրոն: Ականատեսները հիշում էին, որ քանի որ անհնար էր քանդել եկեղեցու ամուր և հաստ պատերը, պայթեցնելու միջոցով են քանդել պատերի մեծ մասը, իսկ մեկ մետրից բարձր պահպանված հիմնապատերը ներառվել են ասֆալտի տակ: Հետևաբար, այս տեղեկությունները ճշտելու և եկեղեցու ամբողջականությունը վերականգնելու նպատակով 2017 թ-ին տեղում իրականացվեցին փրկարարական պեղումներ՝ հաստատելու Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցու մասին եղած տեղեկությունները: Եկեղեցին ունեցել է մեծ ծավալ՝ պեղումների արդյունքում վավերացվել է 24.75 × 12.77 մ չափերով կառույց, որի պատերի հաստությունը հասնում է մինչև 1.3 մետրի:

Մեղրեցոց եկեղեցին իր ծավալատարածական և ճարտարապետական լուծումներով կրկնում է 17-19-րդ դարերի Շուշիում և Արցախի այլ շրջաններում հայտնի եկեղեցիների տիպը:

Արարատի ստորոտում. Դամբատ/Թամբատ. Միջնադարյան հայկական «քաղաք» Փոքր Արարատի լանջերին, Մակուի գավառ, Իրան

Բեհրուզ Խանմոհամմադի, Էբրահիմ Բոդակի, Օնոֆրիա Գասպառո, Ռոբերտո Դան

Դամբատի (հայտնի է նաև որպես Թամբատ կամ Խարաբե Զար) հնավայրը, որը գտնվում է Իրանի հյուսիսարևմտյան հատվածում՝ Փոքր Արարատ լեռան հարավ-արևելյան լանջերին, միջնադարյան նշանակալի, սակայն, քիչ ուսումնասիրված բնակավայր է՝ տեղակայված Իրանական բարձրավանդակի, Անատոլիայի և Հարավային Կովկասի խաչմերուկում: Գտնվելով թուրք-իրանական ներկայիս սահմանի մոտ՝ Դամբատը պահպանել է ճարտարապետական հարուստ մնացորդներ, որոնք վկայում են առնվազն մինչև ուշ միջնադար առևտրային և անասնապահական ուղիները վերահսկելու հարցում նրա ռազմավարական դերի մասին: Այս հոդվածը ներկայացնում է հեղինակների կողմից իրականացված վերջին դաշտային ուսումնասիրությունների արդյունքները՝ ուղղված հնավայրի փաստագրմանը և տարածաշրջանի պատմաաշխարհագրական լայն համատեքստում դրա համեմատական վերլուծությանը:

Հուշարձանը զբաղեցնում է ավելի քան 200 հա մակերես և ներառում է մի շարք քարաշեն բնակելի շինություններ, դարավանդային պատեր, մեծ ցանկապատված փարախներ, պահեստային հորեր և ստորգետնյա ապաստարաններ՝ ինչը ցույց է, որ այս համալիր բնակավայրը հարմարեցված է եղել ինչպես պաշտպանական, այնպես էլ՝ անասնապահական կարիքներին:

Այն հանգամանքը, որ բնակավայրը զուրկ է քաղաքային համաչափ պլանավորումից և փոխարենը՝ կազմակերպված է ցրված խմբավորումներով, հիմք է տալիս Դամբատը բնութագրել ոչ որպես քաղաքային կենտրոն, այլ, հավանաբար, որպես երկրագործական-անասնապահական տնտեսաձև վարող կիսաքոչվոր համայնքների բնակավայր: Կառույցներում չոր շարի կիրառումը, խորը գլանաձև պահեստահորերի առկայությունն ու ընդարձակ ցանկապատված փարախների կառուցումը վկայում են պլանավորման բարձր մակարդակի մասին:

Համադրելով հնագիտական տվյալները՝ հոդվածն ուսումնասիրում է Տամբատ/Տամբեր տեղանվան հետ կապված պատմական և տեքստային վկայությունները, որոնք հանդիպում են մի շարք հայկական միջնադարյան աղբյուրներում, այդ թվում՝ Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու և Թովմա Արծրունու աշխատություններում: Այս աղբյուրների և դրանց

աշխարհագրական տվյալների քննական վերանայման միջոցով՝ հեղինակները վերարծարծում են հայկական պատմական աշխարհագրության երկարամյա բանավեճերն ու առաջարկում աշխատանքային վարկած այս տեղանվան նույնականացման և տեղորոշման հարցում:

Չնայած պեղումների բացակայությանը և սահմանամերձ լինելու պատճառով թռչող սարքերի օգտագործման սահմանափակումներին՝ փաստագրված նյութերը վկայում են պատմական և մշակութային զգալի արժեք ունեցող հուշարձանի մասին: Հեղինակները գտնում են, որ Դամբատը պետք է ներառել տարածաշրջանի՝ ընդհուպ մինչև ուշ միջնադար ընկած պատմական փոխակերպումներին վերաբերող քննարկումներում: Հոդվածն ավարտվում է ընդգծելով Դամբատի ներուժը ոչ միայն որպես ապագա հնագիտական հետազոտությունների հավանական վայր, այլև որպես կայուն մշակութային զբոսաշրջության վայրի թեկնածու՝ հաշվի առնելով դրա եզակի բնական և պատմական միջավայրը:

Մահը և հիշողությունը ժայռի մեջ. Օհանավանի նորահայտ միջնադարյան ժայռափոր համալիրը

Միեր Խեչոյան, Դիանա Միրիջանյան, Հասմիկ Սիմոնյան

Օհանավանի միջնադարյան ժայռափոր համալիրը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի համանուն գյուղի վարչական տարածքում, Քասաղի կիրճի՝ Սերկևիլի ձորի հատվածում: Համալիրն ամբողջությամբ կերտված է տուֆե ժայռազանգվածի մեջ: Հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ համալիրը բաղկացած է վաղմիջնադարյան ժայռափոր դամբարանից, հոգևոր կառույցից և տնտեսական ու արտադրական նշանակություն ունեցող շինություններից, որոնք նույնպես ժայռափոր են: Ըստ գործառութային նշանակության՝ հայտնաբերված համալիրի կառույցները կարելի է բաժանել երկու տեսակի՝ հոգևոր-հիշատակային և տնտեսա-արտադրական:

Վաղմիջնադարյան մի շարք դամբարանային կառույցների շարքում (Աղցք, Հռիփսիմե, Գայանե, Մեսրոպ Մաշտոց, Թալին, Կարենիս, Ամարաս, Տիգրանակերտ և այլն) Օհանավանի դամբարանն առանձնանում է իր ճարտարապետական հորինվածքով և ծավալատարածական լուծումներով:

Այն ունի 295 × 135 սմ ներքին չափեր և արևելք-արևմուտք ուղղվածություն: Մուտքը հյուսիսային կողմից է (բարձր. 150 սմ, լայն. 70 սմ), որի աջ և ձախ մասերը մշակված են կիսագլանաձև զույգ որմնասյուների տեսքով՝ վերնամասում համապատասխանաբար խոյակով, իսկ ստորին

մասում՝ խարիսխով: Մուտքի վերնամասն ավարտվում է կամարաձև մշակումով, իսկ նրանից վերև փորված է պատուհան:

Դամբարանի մուտքից ձախ փորված են տարբեր չափերի ութ խաչեր: Նույն հատվածում դրված է քառակող կոթողի խորանարդաձև պատվանդան (չափերը՝ 50 × 50 սմ, բարձր. 39 սմ, խոր. 22 սմ, կլոր փոսիկը՝ 10 սմ, խոր. 6 սմ), որի նիստերից մեկի վրա քանդակված են երկու «ավետարանիչներ»՝ Ավետարանը ձեռքներին:

Նախքան աշխատանքները սկսելը, դամբարանի ներսը բաց էր և հիմնական աշխատանքները կենտրոնացվեցին կառույցի արևմտյան կողմում գտնվող ժայռափոր երկու գերեզմանների պեղումների վրա: Դրանցից մեկը ծածկված էր երկթեք տապանաքարով (թաղման փոսի չափերն են՝ երկ. 150 սմ, լայն. 50 սմ, խոր. 70 սմ, տապանաքարի չափերն են՝ 110 × 50 սմ, բարձր. 17 սմ):

Երկրորդ թաղումը ծածկված էր հարթ տապանաքարով (թաղման փոսի չափերն են՝ երկ. 165 սմ, լայն. 40 սմ, խոր. 85 սմ, տապանաքարի չափերն են՝ 105 × 49 սմ, բարձր. 20 սմ):

Թաղման խցերից հայտնաբերված ոչ ամբողջական կմախքները թույլ են տալիս նախնական եզրակացնել, որ այստեղ ամփոփված են հանգուցյալների մասունքները: Համալիրի մյուս կառույցները միտված էին սպասարկելու դամբարանում ամփոփված անձանց հիշատակը:

Դամբարանն իր ճարտարապետական և հորինվածքային առանձնահատկություններով թվագրվում է վաղ միջնադարով՝ 5-6-րդ դարերով: Վաղ միջնադարով է թվագրվում նաև մատուռը: Իսկ տնտեսական նշանակության կառույցների թվագրության հարցը առայժմ հստակ չէ, քանի որ հայտնաբերված գտածոների թվագրությունը հասնում է մինչև 13-րդ դար:

Այսպիսով, համալիրի հնագիտական և ճարտարապետական նախնական քննությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ ամփոփված են երևելի հոգևոր անձինք, որոնք առանձնակի դեր են ունեցել Հայոց եկեղեցու պատմության համար:

Երուսաղեմի վրաց ձեռագրերի հավաքածուում Տայեցի Մաքսիմոսի կողմից արտագրված չորս Ավետարանները

Վլեդիմեր Կեկելիա

Երուսաղեմի վրաց համայնքի պատմությունը ուսումնասիրելու համար առաջնային աղբյուրներ են հանդիսանում վրացական ձեռագրերի հիշատակարանները: Առավել կարևոր են այն ձեռագրերի

հիշատակարանները, որոնք արտագրվել են Սուրբ Երկրի վրացական վանքերի համար և հետո փոխանցվել տարբեր վրացական վանքեր, ինչպես նաև այն ձեռագրերը, որոնք արտագրվել են հենց Երուսաղեմում կամ նրա մերձակա վանական համալիրներում: Այս ձեռագրերի մեծ մասը պահվում է Երուսաղեմի Ուղղափառ Պատրիարքարանի գրադարանում: Դրանք գրադարան են տեղափոխվել Սուրբ Խաչ վրացական վանքից, որը Սուրբ Երկրի վրացական ուղղափառ համայնքի կենտրոնն էր և որտեղ պահվում էին մյուս վրացական վանքերի բոլոր ձեռագրերը, որոնք հետագայում, հիմնականում Սուրբ Երկրում օսմանյան իշխանության հաստատումից հետո, աստիճանաբար անցան տարբեր քրիստոնյա համայնքների տիրապետության տակ: Սույն հոդվածում ուսումնասիրվում է Jer. Geo. 103 ձեռագիրը: Ներկայացվում է ձեռագրի նկարագրությունը և հրապարակվում են նրա հիշատակարանները: Ձեռագրի չափսերն են՝ 232 × 165 մմ, կազմված է 199 թերթից, գրված է մագաղաթի վրա: Ձեռագիրը թերի է. բացակայում են ինչպես սկզբնամասը, այնպես էլ՝ վերջաբանը: Տեքստը հարուստ է մանրանկարներով, ինչպես նաև բազմաթիվ զարդանախշ սկզբնատառերով ու լուսանցքներով: Չորս Ավետարանները պարունակում են սուրբ Գիորգի Մթածմիդելիի (Աթոսցի) խմբագրած տարբերակը: Ձեռագրի վերջում պահպանվել է ընթերցումների ցանկը:

Ավետարանիչների մանրանկարները գտնվում են Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարաններից առաջ, իսկ Հովհաննես ավետարանիչը պատկերված է Պրոխորոսի հետ միասին:

Ձեռագրի գրիչների հիշատակարանները պահպանված են հետևյալ էջերում. 19v, 36r, 67v, 87r, 92r, 95v:

- «*Աստված ողորմի գրիչ Մաքսիմոս Տայեցուն և նրա ծնողներին: Եվ նրանք, ովքեր այս կասեն, կօրհնվեն Աստծուց*»:
- «*Աստված ողորմի մեղսավոր Մաքսիմոսի հոգուն*»:
- «*Աստված ողորմի գրիչ Մաքսիմոս աբեղային, ամեն*»:
- «*Աստված ողորմի մեղսավոր Մաքսիմոսին, ամեն*»:

95r թերթում կարդում ենք. «*Աստված ողորմի մեղսավոր, այս չորս Ավետարանները գրող, շատ վիշտ տեսած Մաքսիմոս աբեղայի հոգուն: Նրանք, ովքեր կհիշեն նրան՝ Աստծուց կներվեն*»:

Երկրորդ գրիչի հիշատակարանը պահպանվել է 92r թերթում. «*Այս Չորս Ավետարանները գրվեցին Կոստանդին Մեծի թագավորության ժամանակ Նիկողոս վանականի կողմից*»:

Այս հիշատակարանի համաձայն՝ Ավետարանները գրվել են Կոստանդինի գահակալության ժամանակ, որին գրիչն անվանում է «մեծ»: Վրաստանում 13-14-րդ դարերում միայն մեկ Կոստանդին կարող էր այս տիտղոսով կոչվել՝ Կոստանդին I-ը (1293–1327 թթ.), Դավիթ VI Նարինի որդին՝ Արևմտյան Վրաստանի թագավորը: Նրա ջանքերով 1310 թ. վրացիները վերադարձրին Սուրբ Խաչի վանքը Սուրբ Երկրում, որը 1272 թ. գրավել էին

Եգիպտոսի մամլուքները: Հավանական է, որ այս հարուստ նկարազարդ ձեռագիրը վերագրվել և նվիրվել է Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքին այս կարևոր իրադարձությունից հետո, հավանաբար, նրա հովանավորությամբ: Այս համատեքստում ձեռագիրը կարելի է թվագրել 14-րդ դարի երկրորդ տասնամյակով:

Սուրբ Երկրի հայերեն վիմագիր ժառանգության ուսումնասիրությունը. մատենագիտական ակնարկ

Խաչիկ Հարությունյան

Սուրբ Երկրի հայերեն վիմագիր ժառանգությունն իր հնությամբ, գիտական նշանակությամբ, իսկ առանձին դեպքերում նաև բացառիկությամբ մշտապես եղել և շարունակում է մնալ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Հատկանշելի է, որ տեղի հայերեն վիմագիր ավանդույթը սկիզբ է առել գրերի գյուտին անմիջապես հաջորդած շրջանից և գրեթե անխաթար կերպով շարունակվել մինչև մեր օրեր: Այդ վիմագրերն առավել մեծ քանակությամբ հանդիպում են հիմնականում համաքրիստոնեական սրբատեղիներում, ինչպիսիք են Քրիստոսի Սուրբ Հարության տաճարը Երուսաղեմում և Սուրբ Ծննդյան տաճարը Բեթղեհեմում: Մեծ թվով վիմագրեր կան նաև տեղի հայկական սրբատեղիներում:

1970-1980-ական թվականներին իրականացված գիտարշավների և հետագա ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ զգալի թվով հայերեն արձանագրություններ (հիմնականում անարհեստ քերծագրեր) կան նաև դեպի Սինայ լեռը ձգվող ուխտավորական ճանապարհներին՝ ժայռափոր կառույցներում, բլուրներին և այլուր: Հայերեն վիմագրեր և քերծագրեր են փաստագրվել նաև Նազարեթում, Ռամլեում, Յաֆֆայում և այլ բնակավայրերում: Ընդ որում նշելի է, որ այսօր էլ տարատեսակ շինարարական աշխատանքների, նորոգումների կամ հնագիտական պեղումների ընթացքում շարունակում են ի հայտ գալ հայերեն նոր վիմագրեր:

Գրավոր այս հուշարձանների կարևորությունը և հարստությունը նկատի ունենալով՝ դրանց հավաքման ուղղությամբ ջանքեր են գործադրվել դեռևս 19-րդ դարավերջից, որի արդյունքում ձևավորվել է բավական հարուստ մատենագիտություն: Մյուս կողմից, պետք է փաստել, որ չնայած տեղի հայերեն վիմագրերը հավաքելու ավելի քան հարյուրամյա ջանքերին՝ մինչ օրս բացակայում է այդ գրավոր հուշարձաններն ամբողջացնող մի համապարփակ ժողովածու կամ ուսումնասիրություն:

Ներկա հոդվածում մենք փորձել ենք ամփոփ կերպով ներկայացնել տեղի հայերեն վիմագրերի հավաքման ընթացքը և հիմնական ուսումնասիրությունները՝ կարևորելով այդ աշխատանքների շարունակականությունը, ինչպես նաև մի համապարփակ ժողովածուի անհրաժեշտությունը:

Նախնական դիտարկումներ Դվինի երկրագործական տնտեսության մասին

Ռուբեն Հովսեփյան

Դվինը միջնադարյան Հայաստանի արհեստագործական և առևտրական խոշորագույն կենտրոններից էր: Սույն հոդվածում դիտարկվում է Դվին քաղաքի երկրագործական տնտեսությունը, դրա բնույթն ու առանձնահատկությունները: Հիմք ընդունելով միջնադարյան հայկական (Սեբեոս, Հովհաննես Դրասխանակերտցի), արաբական (իբն-Հաուկալ, Իսթահրի), բյուզանդական (Պրոկոպիոս Կեսարացի, Հովհաննես Սկիլիցես), օսմանյան (Մունաջջիմ-Բաշի) սկզբնաղբյուրները, ինչպես նաև Դվին քաղաքի տարբեր տարիների պեղումներից հայտնաբերված և գյուղատնտեսությանն առնչվող հնագիտական նյութը, առաջին անգամ համառոտ դիտարկվում է Դվին քաղաքի գյուղատնտեսական տնտեսությունը:

Ըստ միջնդարյան սկզբնաղբյուրների՝ Դվին քաղաքի շուրջ տարածվում էին խաղողի ու պտղատու ծառերով այգիներ, ընդարձավ վարելահողեր, հիշատակվում է քաղաքի ոռոգման համակարգը, բրնձի մշակումը: Կարևոր է դիտարկել քաղաքի պեղումներից գտնված հնաբուսաբանական և ոսկրաբանական նյութը: Հնագիտական նյութում առանձնակի կարևոր են ծանր գութանի երկաթե ամբողջական պահպանված խոփը, բահերի երկաթե ամբողջական հատվածները, ցաքատների, տարբեր դանակների ամբողջական և բեկորային օրինակները և այլն: Առանձնակի տեղ ունեն փաստված մառանները մեծ կարասներով:

Բուսանուններից կազմված հայկական տեղանունները Սյունիքի նահանգում

Հրաչ Մարտիրոսյան, Աննա Արամյան

Սյունիքի, Արցախի և որոշ չափով՝ Ուտիքի տարածքների հիմնական բնիկ բնակչությունը հնագույն ժամանակներից մինչև նոր շրջանը եղել են հայերը: Սա հաստատվում է ոչ միայն հնագույն հայկական պատմագրությամբ՝ սկսած 5-րդ դարից, և հայկական տեղանունների մեծ քանակով, այլև անտիկ հեղինակների՝ Պտղոմեոսի, Ստրաբոնի և ուրիշների վկայություններով: Այս ամենին ավելանում է ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի, հնագիտական գտածոների ու արձանագրությունների, ձեռագրային հիշատակարանների և այլ աղբյուրների ամբողջությունը, ինչն այլևս որևէ կասկածի տեղ չի թողնում: 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ում Սյունիքն ու Արցախը ներկայացված են որպես Մեծ Հայքի 9-րդ և 10-րդ նահանգներ: Իսկ 8-րդ դարում Ստեփանոս Սյունեցին *Սիւնի* ու *Արցախային* բարբառները նշում է եզերական բարբառների շարքում՝ տարբերակելով դրանք կենտրոնական բարբառներից:

Այս ամենը հստակորեն հակասում է ադրբեջանական գիտական ու քաղաքական դրույթներին, որոնք ժխտում են Սյունիքի և Արցախի հայկականությունը և Սյունիքը ներկայացնում են «Արևմտյան Ադրբեջան» կեղծ հորջորջմամբ: Այսպիսի ձևակերպումները նպատակ ունեն արդարացնելու վերջին տարիների ռազմական գործողությունները, Արցախի հայ բնակչության բռնի տեղահանությունը և Սյունիքի տարածքների մի մասի գրավումը, ինչպես նաև նվաճումների ընդլայնման բացահայտ սպառնալիքները: Այս հայատյաց քաղաքականությունը հետևողականորեն ուղեկցվում է պատմության համակարգային խեղաթյուրմամբ և հայկական մշակութային ժառանգության վերացմամբ:

Մենք Սյունիքի, Արցախի և հարակից տարածքների լիարժեք հայկականության խնդիրն ուսումնասիրում ենք լեզվաբանական տեսանկյունից: Հետազոտության նպատակն է պարզել, թե ինչպես են այս տարածքների բարբառային առանձնահատկություններն արտացոլվում տեղանունների մեջ: Նման լեզվական վկայությունները կարող են օգնել որոշելու բառաձևերի ժամանակագրությունը և հաստատել տվյալ տարածքներում հայախոս բնակչության շարունակական ներկայությունը:

Սույն աշխատանքը կենտրոնանում է Սյունիքի՝ բուսանուններից ածանցված տեղանունների վրա: Դրանք հիմնականում կազմված են *-ենի*, *-եակ* / *-(ու)կ*, *-ի* բուսածանցներով, առատություն արտահայտող *-ուտ* և հավաքական *-եան* ածանցներով, *-ք* հոգնակերտով, երբեմն նաև *թաղ* «թաղամաս» կամ *մայրի* «անտառ» բաղադրիչներով: Այսպիսի թափանցիկ տեղանուններից են՝ *Խնձորեակք*, *Վարդենիք* և *Փշատիք*: Սյունիքի այս

տեղանունների հիմնական աղբյուրը միջնադարյան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի (13-14-րդ դարեր) «Սյունյաց պատմություն» երկում զետեղված հարկացուցակն է:

Սակայն, կան նաև բազմաթիվ տեղանուններ, որոնց արմատների բուսական իմաստն ի հայտ է գալիս ստուգաբանական հետազոտության շնորհիվ: Սույն հոդվածում մեկնաբանում ենք այդ կարգի մի շարք ուշագրավ օրինակներ՝ *Անկուզիք*, *Գեհենիք*, *Գենենաթաղ(թ)ք*, *Գինական գետ*, *Ըշտկամայրի*, *Լուցմայրի* / *Դից մայրի*, *Հարժիք*, *Ձղահայրեանք*, *Ուռական գետ*, *Սնծնեակ* և *Յը(ր)ցնի*: Հոդվածի վերջում ներկայացնում ենք այս երկու խմբերի տեղանուններն ընդգրկող ամփոփիչ աղյուսակ:

Այս տեղանուններից շատերը պահպանել են Սյունիք-Արցախ բարբառային տարածաշրջանին հատուկ բառապաշարային և հնչյունաբանական դիմագծեր: Դրանց բուսանվանական բնույթը վկայում է այս բնաշխարհի և դրա հայախոս բնակիչների խորը կապի մասին: Այս լեզվաբանական և բնաշխարհային իրողությունների ամբողջությունը ակնհայտ է դարձնում այս տարածքներում հայոց լեզվի գերակշիռ ներկայությունը բազում դարերի ընթացքում:

Թագուհի Մելիսենդան

Արմեն Կլոդ Մութաֆյան

12-րդ դարի վերջում, երբ խաչակիրները նվաճեցին Երուսաղեմը և հիմնեցին չորս լատինական պետություն Սիրիայում, անհրաժեշտություն առաջացավ այդ տարածքներում բնակեցնելու կանանց: Սակայն, թե՛ կրոնական, թե՛ քաղաքական պատճառներով այդ ընտրությունն ըստ էության սահմանափակվեց հայ իշխանուհիներով, որոնք, արդյունքում, հայտնվեցին այդ պետությունների գլխին: Ամենանշանավորը Երուսաղեմի թագավորությունն էր, որի առաջին տիրակալը՝ Բալդուին I-ը, ամուսնացավ հայ իշխանուհի Արդայի հետ, ում վերցրեց որպես երկրորդ կին: Վերջինս շուտով մերժվեց ու գրեթե ոչ մի հետք չթողեց պատմական աղբյուրներում: Նրա հաջորդը՝ Բալդուին II-ը, ամուսնացավ Մորֆիայի՝ Մելիտենեի հայ իշխան Գաբրիելի դստեր հետ: Զույգն ունեցավ չորս դուստր, որոնցից ավագը՝ Մելիսենդան, հոր մահից հետո՝ 1131 թվականին, օրենքի ուժով դարձավ Երուսաղեմի թագուհի: Հայ պատմագրության մեջ այս հայ իշխանուհիները գրեթե անտեսված են, հավանաբար, քաղկեդոնականություն ընդունելու պատճառով: Սակայն, հույն-լատինական և սիրիական աղբյուրներում նրանք բավական լավ են ներկայացված: Մելիսենդան մնացել է որպես առասպելական կերպար քրիստոնեական Արևելքում. փայլուն, կրթված, հանդուրժող, բայց միևնույն ժամանակ՝ անզիջում իր իշխանության

մեջ: Վիլհելմ Տյուրոսցու վկայությամբ՝ հենց նա էր, «*որ կառավարեց թագավորությունը երեսուն և ավելի տարի*:

Մակար Երուսաղեմացու Թուղթը և մկրտարանների խնդիրը վաղքրիստոնեական Հայաստանում

Ղարիբյան Նազենի

Հայ ճարտարապետության պատմությանը նվիրված ուսումնասիրություններում ավանդաբար ընդունված է համարել, որ Հայաստանում մկրտարանների համար հատկացված չեն եղել առանձին կառույցներ կամ եկեղեցուն կից հատուկ սենյակներ: Մինչդեռ, Հայաստանին հարեւան երկրներում, ինչպես, օրինակ, Հյուսիսային Ասորիքում, Միջագետքում, Վիրքում և Աբխազիայում, այդպիսի մկրտարանների գործածությունը համատարած բնույթ է կրել վաղքրիստոնեական շրջանում:

Հոդվածի նպատակն է բանավեճ ծավալել այս թեմայի շուրջ, նախ՝ վերլուծելով գրավոր աղբյուրները և առաջին հերթին՝ հայոց եպիսկոպոսներին հասցեագրված Մակար Երուսաղեմացու (314-335/336 թթ.) «Թուղթը», որը թվագրվում է 335 թվականով: Ներկայացված վերլուծության արդյունքները թույլ են տալիս ենթադրել առանձին ենթակառուցվածքներով մկրտարանների գոյությունը նաև Հայաստանում և, ըստ այդմ, կարող են որպես փաստարկ ծառայել՝ վաղքրիստոնեական հուշարձանների վերաբերյալ մինչ այժմ ունեցած հնագիտական տվյալների վերաքննության կամ ապագա պեղումներում և ուսումնասիրություններում այս վարկածը հաշվի առնելու համար:

Հայականացման արտահայտությունները. հայկական ներդրումը միջնադարյան խոշոր կայսերական ավանդույթների ձևավորման գործընթացում

Միքելե Նուչիոտի

Այս համառոտ անդրադարձը միտված է շարունակելու հայ ինքնության թեմայով քննարկումները, որը պատիվ և հաճույք եմ ունեցել վարել Համլետ Պետրոսյանի հետ դեռևս 2011 թվականից: Համլետը՝ ում հետ կիսել եմ գիտական հետազոտություններ, գաղափարական զրույցներ և բանավեճեր, ինչպես նաև բազում կազմակերպչական դժվարություններ՝ կապված Վայոց ձորում և Դվինում իրականացված հայ-իտալական համատեղ հնագիտական պեղումների, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի և Ֆլորենցիայի համալսարանի միջև ուսանողական փոխանակման ծրագրերի կազմակերպման հետ, ինձ համար դարձել է միջնադարյան հայկական մշակույթը բացահայտելու գլխավոր ուղենիշը:

Մեր առաջին հանդիպումը տեղի ունեցավ մեր ընդհանուր բարեկամ Ռուբեն Գալիչյանի բարյացակամ միջնորդությամբ, ով Գուիդո Վանինիին և ինձ ներկայացրեց Համլետին՝ նպատակ ունենալով նախանշել Մետաքսի ճանապարհի մշակութային լանդշաֆտների նախնական քարտեզագրումը Վայոց ձորում: Խորհրդանշական է, որ այդ առաջին հանդիպման տեսագրությունն այսօր էլ պահպանված է՝ Ռիկարդո Պոլվերոնիի՝ մեր մեկ այլ ընդհանուր բարեկամի կողմից նկարահանված «Հնագիտական զբոսաշրջիկները Հայաստանում» վերնագրով կարճ վավերագրական ֆիլմի միջոցով, որն ստեղծվել էր Վայոց ձորում մեր առաջին հետախուզական ծրագրի ընթացքում:

Հետևաբար, սույն հոդվածում ներկայացվող մտորումներն ուղղում եմ իմ ընկերոջն ու գործընկերոջը՝ Համլետ Պետրոսյանին, որպես խթան մեր արդեն ընթացող և ապագա քննարկումների համար:

Դմանիսիի միջնադարյան գերեզմանոցը – վիմագրական նոր վկայություններ

Ջիմշեր Չխվիմիանի, Հարություն Խուդանյան, Վլեդիմեր Կեկելիա

Հոդվածում ներկայացված են Վրաստանի հարավային կարևոր քաղաքային կենտրոններից մեկի՝ Դմանիսիի միջնադարյան գերեզմանոցի 11–14-րդ դարերով թվագրվող նորահայտ վիմագիր վկայությունները: Գտնվելով խոշոր առևտրական ուղիների խաչմերուկում՝ Դմանիսին ծաղկում էր ապրում իբրև բազմէթնիկ և բազմադավան կենտրոն՝ մինչև Լենկթեմուրի 14-րդ դարի վերջի արշավանքները, որոնք և պատճառ դարձան նրա անկմանը: Հնագիտական հայտնագործությունները բացահայտում են կառուցվածքային առումով բարդ կազմակերպված գերեզմանոց, որը բաժանված է քրիստոնեական և մուսուլմանական հատվածների: Վերջիններիս տապանաքարերը կրում են վրացերեն, հայերեն և արաբերեն արձանագրություններ՝ արտահայտելով քաղաքում բնակված ժողովուրդների և համայնքների բազմազանությունը:

Վերջին տարիներին բացահայտված նյութերի թվում են 12–14-րդ դարերի թվագրությամբ հայերեն խաչքարեր, որոնք վկայում են հայ ժողովրդի նոր վերաբնակեցման ալիքների, ինչպես նաև այդ համայնքի՝ վրացադավան քրիստոնեության շրջանակներում ինտեգրման մասին: Հայկական բնակչության որոշ ազդեցիկ ներկայացուցիչներ զբաղեցրել են բարձր վարչական պաշտոններ. նրանց թվում է Միխրիկի որդի Հոբը՝ 12-րդ դարի վրացերեն արձանագրությամբ հիշատակված արքունի պաշտոնյան: Այս ժողովուրդները կառուցել են շինարարական և գեղարվեստական առումներով փոխազդված հուշարձաններ, որոնք մարմնավորում են Դմանիսիին բնորոշ մշակութային սինկրետիզմը:

Գերեզմանոցի մուսուլմանական հատվածում հայտնաբերված են գմբեթավոր դամբարաններ՝ իլխանյան ճարտարապետության հատկանիշներով, և սյունակոթող հիշեցնող տապանաքարեր՝ իսլամական թաղման ավանդույթներին համապատասխան: Քրիստոնեական գերեզմանները տարբերվում են իրենց կառուցվածքով՝ ներառելով քարե սարկոֆագներ, փորված սյունակոթողներ և հավանաբար փայտե ծածկույթներով գերեզմաններ: Նշանակալի է, որ հայկական հատվածը, տարածքային սղության պատճառով, ընդլայնվել է ի հաշիվ թեք, դժվարանցանելի գոտիների, ինչը հաստատվում է վերջին պեղումների արդյունքում:

Մտորումներ հրեաների մասին Հայաստանում և հայկական աղբյուրներում

Զարուհի Պողոսյան

Այս հոդվածի նպատակն է համադրել և վերլուծել միջնադարյան Հայաստանում հրեական համայնքների առկայությունը՝ միջնադարյան հայկական աղբյուրներում հրեաների և հուդայականության մասին հիշատակումների և պատկերացումների հետ: Այն ի մի է բերում Հայաստանում և Աղվանքում հրեական համայնքների գոյության մասին տվյալներն ըստ պատմական աղբյուրների, ինչպիսիք են Փավստոս Բուզանդի, Մովսես Դասխուրանցու, ալ-Բալադուրիի, Մասուդ իբն Նամդարի և Ստեփանոս Օրբելեանի գործերը՝ համեմատելով այս հեղինակների սեղմ վկայությունները բազմաթիվ այլ՝ ոչ-պատմական աղբյուրների հետ, որոնք այս կամ այն կերպ վերաբերում են հրեաներին կամ հուդայականությանը:

Հոդվածը ցույց է տալիս, որ հրեաներին կամ հուդայականությանը վերաբերող պատկերացումները՝ ներառյալ նրանց ներկայացնելու համար կիրառվող զանազան հռետորաբանական գործիքներն ու գրական եզրերը, բնորոշ էին տարբեր քրիստոնեական մշակույթների, եւ շատ վաղ շրջանառության մեջ են մտել Հայաստանում թարգմանական գրականության շնորհիվ՝ անկախ այդ երկրում հրեական համայնքների փաստական ներկայությունից: Այսպիսով՝ ուսումնասիրությունների այս երկու ուղղությունը պիտի առանձնացվի: Հետաքրքիր է, որ միջնադարյան Հայաստանում միակ հաստատված հրեական համայնքը Եղեգիս գյուղում գրավոր աղբյուրներում չի հիշատակվում: Ելնելով այս նախադրյալից՝ հոդվածի վերջին մասում վերլուծվում են երեք վարքագրական աղբյուրներ, որոնց գլխավոր հերոսները հրեաներ են, և յուրաքանչյուր դեպքում առաջ է քաշված նրանց հայերեն թարգմանության հնարավոր նպատակները՝ ելնելով հայկական պատմական համատեքստից, անկախ՝ քրիստոնյա հայերի և հրեաների իրական փոխհարաբերություններից:

Խեցեղենի ուսումնասիրությունը շերտագրական մեթոդով. Դվինի օրինակը

Էլիզա Պրունո

Ներկայացվող հոդվածը քննարկում է 2021–2023 թվականներին Դվինի միջնադարյան հնավայրի «Area 1000» հատվածում իրականացված հայ–իտալական համատեղ պեղումների ընթացքում խեցեղենի վերլուծության մեթոդաբանությունն ու նախնական արդյունքները: Ուսումնասիրության հիմնական առանցքը փոսային լցումների շերտագրական քննությունն է: Կիրառվել է համակարգված դասակարգման և քանակական հաշվառման մոտեցում՝ համադրելով կավի բաղադրության, տիպաբանական առանձնահատկությունների և գործառութային նշանակության վերլուծությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվել «հիմնական» (primary), «երկրորդային» (secondary) և «փաստացի» (de facto) թափոնների հասկացություններին, որպեսզի հստակեցվեն հնավայրի ձևավորման գործընթացները և կենցաղային գործունեության պատկերները: Շերտագրական աղյուսակների և քանակական տվյալների՝ բեկորների քանակ, զանգված և նվազագույն անոթների թիվ (MNI), համակցված կիրառումը հնարավորություն է տվել վերակազմել բնակեցման, լքման և մոնողոլական նվաճումից հետո քաղաքաշինական վերաձևավորման դինամիկան:

Վերլուծության արդյունքները հաստատում են խեցանոթների ուսումնասիրությունը շերտագրական մեթոդաբանության մեջ ինտեգրելու կարևորությունը՝ անկախ ժամանակագրական շրջանակներ ձևավորելու և անցյալ հասարակությունների մշակութային ու տնտեսական կառուցվածքներն ավելի լավ հասկանալու համար: Հետագա պեղումների (2025–2026 թթ.) նպատակն է հաստատել վերլուծական այս մոտեցման արդյունավետությունը և առաջարկել նոր գաղափարներ Դվինի հետքաղաքային բարդ փոխակերպումների վերաբերյալ:

Կովկասյան մահմեդական թաթերի, թաթախոս հայերի (հայ-թաթերի) և լեռնային հրեաների էթնոգենեզը նրանց լեզուների մի շարք առանձնահատկությունների լույսի ներքո

Իգոր Սեմյոնով

Կովկասյան մահմեդական թաթերի լեզվական մի շարք առանձնահատկություններ հնարավորություն են տվել Ա.Լ. Գրյունբերգին նրանց էթնոգենեզը կապել ուշ Սասանյան ժամանակաշրջանում պարսիկների՝ Արևելյան Կովկաս ներգաղթի հետ:

Ներկայացվող հոդվածում հիմնավորվում է այն տեսակետը, որ թաթախոս հայերի և լեռնային հրեաների նախնիների միգրացիան այս տարածաշրջան եղել է նույն ժամանակաշրջանում՝ մասնավորապես 568 թվականին:

Լեռնային հրեաների լեզուն տարբերվում է պարսկական ծագում ունեցող բառապաշարում սեմական ֆոնեմների՝ «ʿայն» (ع, ʿ) և «խեթ» (ح, ḫ) ակտիվ ներգրավմամբ: Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս կապել տվյալ խմբի էթնոգենեզը Սասանյան Իրանի հրեաների հետ (վերջիններս ուշ Սասանյան շրջանում անցել են միջին պարսկերեն լեզվին): Լեռնային հրեաների ինքնանվանման՝ ǰuhúr-ի ստուգաբանական վերլուծությունը հանգեցնում է նույն եզրակացությանը:

Սեմական ծագում ունեցող բաղաձայններ առկա են նաև թաթախոս հայերի լեզվում, սակայն, վերջիններիս մոտ պարսկական բառերի փոխանցման մեջ դրանց գործածության կանոնները զգալիորեն տարբերվում են լեռնային հրեաների լեզվում ընդունված ձևերից: Այս փաստը վկայում է, որ թաթախոս հայերի նախնիները մինչև իրանական լեզվին անցնելը խոսել են սեմական լեզվով, որը, սակայն, չի կարող լինել արևելյան արամեերենի հրեական տարբերակը: Նրանք սիրիական լեզվի կրողներ էին, որը արևելյան արամեերենի տարբերակներից մեկն էր:

Հետազոտողները նշում են, որ թաթախոս հայերի և կովկասյան մահմեդական թաթերի լեզուները միմյանց շատ մոտ են: Այսպիսով, միջին պարսկերենի այն տարբերակը, որին անցել են թաթախոս հայերը, շատ հավանական է, որ մոտ է եղել կամ նույնիսկ նույնական այն տարբերակին, որն օգտագործել են կովկասյան մահմեդական թաթերի նախնիները:

Թաթախոս հայերի մի մասը հետագայում ընդունել է մահմեդականություն, և այդ պատճառով էլ կովկասյան մահմեդական թաթերի լեզվի մի շարք բարբառներում (հմմտ. Մ.Ի. Գաջիևի տվյալները) պահպանվել են թաթախոս հայերին բնորոշ լեզվական առանձնահատկությունները:

Կովկասում թաթախոս հայերը երկար ժամանակ գտնվել են հայկական մշակույթի և, նախևառաջ, կրոնական ավանդույթի ազդեցության ներքո, ինչի արդյունքում նրանց լեզվում հայտնվել են ինչպես հայկական հնչյուններ, այնպես էլ՝ բազմաթիվ բառային փոխառություններ հայերենից:

Ծիծեռնավանքի նահատակի դամբարանը և հայտնաբերված երկաթե գամերի տիպաբանությունը

Հակոբ Սիմանոյան, Ելենա Աթոյանց

Հնագիտական հայտնագործությունները երբեմն բացառիկ տեղեկություններ են հաղորդում անցյալի դրամատիկ իրադարձությունների մասին և հնարավորություն ընձեռում նորովի մեկնաբանելու վաղմիջնադարյան գրավոր աղբյուրների կասկածելի թվացող հաղորդումները: 1999 թվականին Ծիծեռնավանքի վերականգնման նպատակով ձեռնարկված պեղումների արդյունքում եկեղեցու կենտրոնական մուտքի դիմաց հայտնաբերվեց անտիկ ժամանակաշրջանի ժայռափոր մի դամբարան: Այն իր կառուցվածքով և եզակի գտածոներով հիմք է՝ բացահայտելու պատմության մոռացված դրվագները, որոնք տեղի են ունեցել հին Հայաստանում՝ քրիստոնեության արշալույսին:

Անտիկ և վաղ միջնադարյան՝ մեզ հայտնի հարյուրավոր թաղումներից էապես տարբերվող այս գերեզմանն աչքի է ընկնում իր ոչ կանոնիկ կառուցվածքով և հնագիտական արտեֆակտների ինքնատիպությամբ. թրծակավե ճաճանչող խաչ՝ եզրագծված կարմիր և սպիտակ գծերով, թրծակավե երկարափեշ հագուստով և հոլանի թևերով կնոջ արձանիկ, որի գրկում պատկերված է գառնուկ, ինչպես նաև ձվաձև ուրվագծով, թագաձև գլխիկով և գլանաձև հիմքով սրբաքանդակ, որի վրա լուսեպսակով զարդարված մեծահասակի և երեխայի գլուխների բարձրաքանդակներ են: Թերևս այս քանդակները Աստվածամոր և մանուկ Հիսուսի այլաբանական պատկերումներն են, որոնք առ այսօր հատնի չեն այլ հուշարձաններից: Գանգի վրա և շրջակայքում սփռված էին 79 ամբողջական և բեկոտված երկաթե գամեր, որոնք օքսիդանալով՝ ժանգագույն երանգ էին հաղորդել գանգին: Այս տիպի գամերը բնորոշ են հռոմեական ժամանակաշրջանին, մասնավորապես՝ Փոքր Ասիայի Սագալասոս հնավայրի դամբարանից հայտնաբերված ծիսական գամերին:

Եզակի գտածոները և կմախքի վրայի խոշտանգման հետքերը վկայում են այստեղ թաղվածի բացառիկ լինելու մասին, որը մեզ մղում է բացատրություններ փնտրել և կատարել ոչ ավանդական մեկնաբանություններ: Հավանական է, որ մեծ գամերը կիրառվել են փայտե դագաղի ամրացման համար, իսկ մանր

գամերով ձևավորված է եղել հանգուցյալի գլխի վրա դրված ինքնատիպ մի առարկա, թերևս, փշեպսակ:

Ծիծեռնավանքում պեղված դամբարանին հատուկ են մի շարք հատկանիշներ, որոնք հիմք են ենթադրելու, որ այստեղ կատարվել է անտիկ ժամանակաշրջանում քրիստոնեական հավատքի համար զոհված նահատակի թաղում:

Դվին քաղաքի 8-9-րդ դարերի խեցեղենը

Տատյանա Վարդանեսովա

Մարզային ճանապարհի երկայնքով՝ Հնաբերդ և Վերին Արտաշատ գյուղերի միջև (Արարատի մարզ, Հայաստան) գտնվող փոքր տարածքի վրա, «Դվին մայրաքաղաք» պատմամշակութային արգելոցի մեջ, 2023 թվականին իրականացվել են հնագիտական պեղումներ: Այս տարածքում, Զբոսաշրջության կոմիտեի, Համաշխարհային բանկի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի համատեղ նախագծի շրջանակներում, նախատեսվում էր կառուցել թանգարան: Ենթադրվում էր, որ 2023 թվականի հետախուզական պեղումները կպարզեն ապագա թանգարանի հիմքի տակ հնագիտական շերտի առկայությունը կամ բացակայությունը: 2023 թվականի գարնանը Դվինի պեղումները, որոնք ղեկավարում էր Դվինի արշավախմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը, տվեցին հարուստ հնագիտական նյութեր:

«Դվին մայրաքաղաք» հնագիտական վայրը բարդ և բազմաշերտ հուշարձան է: Հուշարձանի բարդությունն առաջին հերթին այն է, որ նրա շերտագրական սանդղակը սկսվում է Վաղ երկաթի դարաշրջանից՝ Ք.ա. 9-8-րդ դարերից, որը հզոր շերտ է միջնաբերդում, և ավարտվում է Ք.հ. 13-րդ դարի կեսերին՝ մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանով, իսկ քաղաքի միջնադարյան շերտերը, եզակի բացառություններով, կավաշեն շինություններ են:

Կենտրոնական թաղամասում կան նաև ավելի ուշ շրջանի՝ 8-18-րդ դարերի թաղումներ: Դվինի միջնադարյան քաղաքի տարածքը ընդարձակ էր, և այժմ դրա մեծ մասը գտնվում է ժամանակակից գյուղերի և խաղողի այգիների տակ: 20-րդ դարի սկզբին միայն Դվին բլրի և դրա շրջակայքի տարածքն էր հատկացվել հնագիտական հետազոտությունների համար, որն այժմ միավորված է թանգարան-արգելոցի մեջ:

Մայրուղու մոտ գտնվող փոքր տարածքը այս թանգարան-արգելոցի մասն է, որտեղ 2023 թվականին իրականացվեցին հնագիտական պեղումները: Այս տարածքի առանձնահատկությունը, ինչը հաստատվեց այս պեղման արդյունքների հիման վրա, ի տարբերություն մյուսների, այն է, որ կա մեկ հնագիտական շերտ: Այն թվագրվում է 893 թվականի կործանարար

երկրաշարժով, որի հետքերը գրանցված են պեղման մեջ: Այս թվագրումը հաստատվում է պեղման մեջ 3 մ խորության վրա հայտնաբերված Աբբասյան ժամանակաշրջանի դրամներով և 7-րդ դարի բյուզանդական դրամով, որը երկար ժամանակ շրջանառության մեջ է եղել: Պեղումների արդյունքում հայտնաբերվել են հետաքրքիր հնագիտական նյութեր, որոնց մեծ մասը խեցեղեն է: Դրանք 9-րդ դարի խեցեղենի բեկորներ են, որոնք նմանություններ ունեն միջնադարյան Արևելքի խեցեղենի հետ: Հոդվածում մանրամասն վերլուծություն է տրված 2023 թվականի պեղման տարածքից հայտնաբերված 9-րդ դարի ջնարակապատ խեցեղենի վերաբերյալ:

Դամբարան-եկեղեցիների քիչ հայտնի մի տեսակ

Պատրիկ Տոնապետյան

Սույն ուսումնասիրությունը նվիրված է միջնադարյան դամբարանային եկեղեցիների մի տեսակի, որը, թեև ներկայացված է մոտ մեկ տասնյակ օրինակներով Հայաստանում, Վրաստանում և դրանց ազդեցության գոտում, սակայն, մասնագետների կողմից համարժեք ուշադրության չէր արժանացել: Այս կառույցներն ակնհայտորեն տարբերվում են երկհարկանի դամբարանային եկեղեցիների առավել հայտնի խմբից՝ որտեղ դամբարանի վրա կանգնած է աղոթարան, իսկ վերջինս ավարտվում է փոքր բոլորակի տեսքով սլացիկ լապտերով: Այս վերջին տեսակը Հայաստանում լայնորեն ներկայացված է 14-րդ դարի առաջին կեսին (Ուրծաձոր, Եղվարդ, Նորավանքի Բուրթելաշեն, Կապուտան):

Սակայն, այստեղ ներկայացվող տեսակը, լինելով նույնպես երկհարկանի դամբարանային կառույց, տարբերվում է մի քանի էական հատկանիշներով.

Ա) Վերին հատվածը հանդիսանում է սովորական եկեղեցի՝ հիմնականում երկարաձիգ միանավ կառուցվածքով և առանց գմբեթի, իսկ երկու՝ դեռևս ենթադրական օրինակներում՝ ներգրված խաչ հատակագծով և կենտրոնագմբեթ հորինվածքով:

Բ) Հատուկ ուշադրություն է դարձված ստորին՝ թաղումային մակարդակին, որը բնութագրվում է երեք հիմնական հատկանիշներով.

- Շինության տեղադրությունը հատուկ ընտրված է այնպես, որ թաղումը / դամբարանը մասամբ ընկղմված է լեռան լանջում:
- Այն կառուցված է միտումնավոր գեղջկական ոճով:
- Նրա լայնությունը գերազանցում է վերին եկեղեցու լայնությանը, և երկու մակարդակները միմյանցից բաժանված են քիվի նմանվող քարաշարով:

Քննարկվող կառույցները չպետք է դիտարկվեն որպես սովորական եկեղեցիներ, որոնք պարզապես կառուցվել են իբրև դամբարան: Ստորին հարկին ցուցաբերված հատուկ ուշադրությունը, դրա դիտավորյալ կոպիտ երեսպատումը և բնական հողաշերտի կամ լեռան զանգվածի մեջ մասամբ ագուցված լինելը հնարավորություն են տալիս այս կառույցները սահմանել որպես դամբարանային եկեղեցիների առանձնահատուկ տեսակ:

Այս պահին առկա տվյալների համաձայն՝ նման կառույցների ծագման գոտին հանդիսանում է Տայք/Տաո շրջանը՝ միջնադարյան Հայաստանի, Բյուզանդիայի և Վրաստանի սահմանային տարածքը: Այս տեսակի ստեղծումը թվագրվում է 9-10-րդ դարերով, իսկ տարածման փուլը՝ մինչև 13-14-րդ դարեր:

Սույն համառոտ ուսումնասիրությունը նպատակ ունի, թեկուզև մակերեսորեն, վեր հանել այս ճարտարապետական հորինվածքի գաղափարական առանձնահատկությունները՝ շեշտադրելով առավել տեսանելի հատկանիշները: Այս համեստ հետազոտությունը պետք է դիտարկել որպես նախնական և անկատար փորձ մի թեմայի ուսումնասիրության, որը դեռևս կարիք ունի փաստական հենքի համալրման և խորը վերլուծության:

(՞†669) Աղվանց իշխան Ջվանշերի տարաբնույթ աշխարհը լուսաբանված Դավթակ քերթողի ողբի հասարակական, մշակութային, կրթական և կրոնական անհամատեղելի հայացքներով

Ս. Փիթեր Քաուի

Սույն աշխատությունը նպատակ ունի հետազոտել 7-րդ դարի Աղվանից ականավոր իշխան Ջվանշերի կենսագրական գլխավոր հանգամանքները՝ կենտրոնանալով Դավթակ քերթողի ողբի հաղորդած տվյալների վրա: Դրանից ի հայտ է գալիս իշխանի խելամիտ արտաքին քաղաքականությունը, որ զարգացնում էր տարածաշրջանի ամենահեղինակավոր մենապետների հետ, որոնց թվում կարելի է նշել Պարսից շահին, Բյուզանդիոնի կայսրին, խազարների խաքանին և նորակառույց իսլամական պետության խալիֆին, որոնք, ըստ ողբագրի, բարձր էին գնահատում իշխանի բարեմիտ խորհուրդը, իմաստուն խոսքը և հզոր ու ազդեցիկ գործունեությունը: Ինչ վերաբերվում է ներքին քաղաքականությանը, միաժամանակ իշխանը սրտացավ էր իր ժողովրդի բարօրության համար, բայց խստորեն պահում էր հասարակության հիերարխիական կազմը՝ ապահովելու դասակարգային խաղաղությունը:

Մարնակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դավթակի բանաստեղծությունը ուշ անտիկի հայ գրականության մի յուրահատուկ գործ է, քանի որ հոետորական արվեստը բանեցնում է մի աշխարհիկ, ոչ թե կրոնական թեմայի վրա և որպես հեղինակ ունի աշխարհական, ոչ թե կղերական գործիչ: Ամենայն հավանականությամբ նա ստացել է քերականական և ճարտասանական իր բարձր ուսումը Դվինում՝ հիմք ունենալով նաև այլ ուսումնակարգեր, ինչպիսիք են տրամաբանությունը, աշխարհագրությունը և բժշկությունը: Դրանով ընդգծում է այն սերտ կապերը, որոնք գոյացել են Մեծ Հայքի և Ուտիքի տարածքների միջև ճարտարապետության նման մշակութային այլ տիրույթներում: Ի դեպ, այս ժամանակաշրջանում շատ ենք կարդում արքունիքի և արխիվների դպիրների ու քարտուղարների գրական զբաղմունքների մասին Եղիշեի, Ագաթանգեղոսի և Խորենացու էջերում, սակայն, առաջին վստահելի դեմքերն են հենց Դավթակը և Ջվանշերի ներբողագիրը, որոնց երկերը հասել են մեզ և փաստարկում են իշխանի արքունիքի մակարդակի բարձրությունը՝ նեցուկ տալով գրավոր մշակույթին գուսանների բանավոր խոսքի հետ համատեղ:

Արագ և մեծ փոփոխությունների բնորոշ ժամանակաշրջանը լավ դրսևորվում է ողբում տեղ գտած հնի և նորի համակեցության մի քանի օրինակներով: Արիության պարսկական տեսության համաձայն՝ ցանկալի հատկություններն էին՝ մարմնի հսկա հասակը, հզոր ֆիզիկական ուժն ու անդրդվելի համարձակությունը, իսկ հելլենականի տիպիկ դիմագծերը, որոնք գերակշռվում են Ջվանշերի նկարագրությունում, խելացիությունն է և հնարամտությունը՝ մարմնի թեթև և արագ շարժումներով, որոնցով հնարավոր կլինի հակառակորդին խաբել և չսպասած հարվածով տապալել:

Բանաստեղծության մեջ նույնպես առկա են ժանրի տարբեր մոտեցումներ՝ սկզբնական հունական դամբարանաճառի բանականությունից և հավասարակշռությունից մինչև ողբի բուռն զգացումների փռթկումները, որոնք բնութագրում են ողբի վերջին մասը տողերի անհարթությամբ, հանգավորման նորարար ավելացումով և ոճական այլ միջոցներով:

Միաժամանակ, 7-րդ դարին հատկանշանական է քրիստոնեության խորապես տարածվելը հասարակության մեջ մինչև ընդունելություն գտնելը բոլոր խավերի մոտ: Դրա զուգահեռ գործընթացը տեսնում ենք մշակույթի տարբեր ոլորտներում (ինչպես հայտնի է դպրոցի ուսումնակարգից), որտեղ այժմ աստվածաշնչային և վկայաբանական մոտիվները միահյուսվում են անմահության փնտրտուքի նման նախաքրիստոնեական տարրերի հետ ինչպես Դավթակի ժամանակակից Անանիա Շիրակացու գործերում:

Նման զարգացումը երևում է ողբի մենապետական վարչաձևի գաղափարներում, որոնցում միանում են հին արևելքի առյուծ և հովիվ պատկերները հելլենական փիլիսոփա-թագավորի թեմայի և կոստանդինյան քրիստոսանման կերպարի հետ: Վերջինս իր հերթին նախատիպ է հանդիսանում Կամսականների քրիստոնեական թագավորության քաղաքականությանը նույն դարի վերջավորությանը և Բագրատունիների նման մոտեցումը 8-րդ դարում: